

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի
հունվարի 18-ին կայացած Գիտական Խորհրդի N6 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 28-ը (ցուցակը կցվում է)

Դեկան Մ.Ա.Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը

Օրակարգ

1. 2017/2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում
/զեկ. փոխդեկան Ա.Գրիգորյան/
2. «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության» ամբիոնի վարիչի հաշվետվությունը
ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ
/զեկ. ամբ. վարիչ Թ. Վարդանյան/
3. Ավարտական հաշվետվությունների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը
ամբիոններում
/զեկ. ամբ. վարիչներ/
4. Գիտական հաղորդում
5. Ընթացիկ հարցեր

Հաստատել օրակարգ

1. **ԼՄԵՑԻՆ.** Փոխդեկան Արսեն Գրիգորյանի հաղորդումը 2017/2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների ընթացքի վերաբերյալ: Ելույթում Ա.Գրիգորյանը մանրամասնորեն ներկայացրեց ամփոփիչ քննությունների սահմանված ժամկետները: Ներկայացրեց նաև քննաշրջանի ընթացքում առաջացած խնդիրները կապված ուսման վարձը չվճարելու, քննաշրջանին չմասնակցելու և անբավարարների քանակի հետ: Խոսքի ընթացքում՝ ի պատասխան հնչած հարցերին, Ա.Գրիգորյանը նշեց, որ քննություններն ընթացել են ըստ սահմանված կարգի, չեն աչձանագրվել նաև բողոքարկման դեպքեր, փոխարենը եղել է քննությունների հետաձգում, ինչը նախապես զեկուցագրով համաձայնեցված է եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանը, ով բարձրաձայնեց քննությունների կազմած գրաֆիկի ոչ էֆֆեկտիվ լինելը՝ - կուրսը 1 օրվա ընթացքում 2 քննություն է հանձնում, ինչը անընդունելի է,- ասաց նա: Նշեց նաև քննական օրերի հաջորդաբար դրված լինելու փաստը, ինչը արդյունավետ կերպով չի ամրապնդում ուսանողի գիտելիքը: Յուրաքանչյուր քննությունից հետո ուսադը պետք է ընդմիջման հնարավորություն ունենա՝ դրանով իսկ հանգստանալու հնարավորություն ատանա: Մ.Գրիգորյանը դիմեց փոխդեկաններին և հանձնարարեց հսկողության տակ պահել գրաֆիկների կազմման գործընթացը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

2. ԼՄԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Թ.Գ.Վարդանյանի հաշվետվությունը 2016-2017 ուս.տարվա ընթացքում ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ: Հակիրճ ներկայացրեց ամբիոնում առկա ռեսուրսները, բակալավրիատում և մագիստրատուրայում սպասարկման ուղղությունները: Ներկայացրեց ամբիոնում առկա լաբորատորիայի տեխնիկական հագեցվածության բարձր մակարդակը: Ներկայացրեց նաև մշակված և լրամշակված կրթական ծրագրերի մասին: Թ.Վարդանյանը կանգ առավ պրակտիկաների կարևորության վրա, ներկայացրեց վերջիններիս կազմակերպման ուղղությամբ կատարած փոփոխությունները, այդ թվում նաև արտասահմանում ացկացվելիք պրակտիկաների մասին: Իր խոսքում Թ.Վարդանյանը մանրամասնորեն խոսեց ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ: Ելույթում նշվեցին նաև հրապարակումների, դանց քանակի, ոլորտի և բնույթի մասին: Ներկայացրեց նաև ամբիոնի գիտական ներուժը /Հաշվետվությունը կցվում է/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մ.Գ.Մանասյանը. Խոսքում Մանասյանը խոսեց սոցիալ-տնտեսական աշխարհագրության և ֆիզիկական աշխարհագրության միավորումման մասին, քանի որ դրանց տարանջատումը, իր կարծիքով, աբսուրդ է:

Վ.Պ.Վարդանյանը՝ լսելով Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Թ.Գ.Վարդանյանի հաշվետվությունը ամբիոնի կողմից կատարված

աշխատանքի վերաբերյալ՝ դրական գնահատեց այն: Վ.Վարդանյանը շեշտադրեց ամբիոնի կազմակերպվածությունը և համագործակցությունների շրջանակը՝ ինչպես նաև ամբիոնի աշխատակիցների կողմից տպագրած հոդվածների քանակը ինչը Վարդանյանի խոսքերով, վկայում է գիտական մեծ ներուժի մասին: Խոսքի ավարտին Վ.Վարդանյանն առաջարկեց ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Ս.Ռ.Սուվարյանն իր ելույթում նշեց կադր պատրաստելու գործում թիմային աշխատանքի կարևորությունը: Խոսեց նաև յուրաքանչյուր, թե տեղական և թե գլոբալ, խնդիր քննարկելու ավանդույթի անհրաժեշտության մասին: Ս.Սուվարյանը առանձնացրեց ամբիոնի բազմաթիվ խնդիրներ լուծելու կարողությունը: Նշեց սակայն, որ դարերով կուտակված խնդիրները չեն կարող լուծվել միանգամից: Խոսքում նշեց նաև Ֆիզ.աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի կողմից կատարած և կատարվող մեծ գիտական աշխատանքի մասին: Սուվարյանը գովեստի արժանացրեց նախկինում գործող և ամբիոնի ջանքերով վերականգնված «Աշխարհագրություն» առարկայի օլիմպիադային մասնակցելու ավանդույթը: Խոսքի ավարտի Սուվարյանն առաջարկեց ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար, իսկ հաշվետվությունը՝ ընդունելի:

Մ.Ա.Գրիգորյանը իր ելույթում առանձնացրեց ամբիոնի ջանքերով միջազգային կապերի ստեղծումն և ձևավորման կարողությունը, ուսանողների փոխանակման գործընթացի կազմակերպման բարձր մակարդակը: Շեշտեց նաև տարբեր երկրներում ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման փաստը: Խոսեց նաև ջանասիրաբար կատարած աշխատանքների արդյունքում ամբիոնի ձեռքբերումներից՝ բազային թեմաներում ընդգրկված լինելու փաստը: Մարատ Գրիգորյանը համոզմունք հայտնեց ջրաօդերևութաբանություն մասնագիտության վերականգնման անհրաժեշտության մասին: Գրիգորյանն առաջարկեց ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար

3. ԼՄԵՑԻՆ. Ամբիոնի վարիչներ **Ռ.Մովսեսյանի, Ս.Հայրոյանի, Շ.Խաչատրյանի, Գ.Մարկոսյանի, Թ.Վարդանյանի, Ա.Պոտոսյանի** և **Ս.Սուվարյանի** հաղորդումը ավարտական հաշվետվությունների և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ: Բոլոր ամբիոնի վարիչները մանրակրկիտ կերպով ներկայացրեցին ամբիոնում առկա շրջանավարտների թիվը: Վերջիններս նշեցին նաև որ թեմաները բաժանված են, շեշտեցին ընտրված թեմաների արդիականությունը: Հղորդման ընթացքում նշեցին, որ կազմված են ուսանողների և ղեկավարների հանդիպումների գրաֆիկներ: Բոլոր ամբիոնի վարիչներն էլ ընթացքը գնահատեցին բավարար՝ հետագա աշխատանքը շարունակելու համար: Խոսեցին նաև հեռակա ուսուցման համակարգում ուսանողների բացակայությունների մասին, ում հետ ավարտական աշխատանքների ուղղությամբ աշխատանքները կտարվեն հեռակա ուսուցման քննաշրջանը սկսվելուն պես:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մ.Ա.Գրիգորյանը նշեց ատեստավորման քննությունների կարգի փոփոխման փաստը, խոսեց նաև ավարտական աշխատանքի գնահատման կարգի մասին: Ամբիոնի վարիչը պատասխանատվություն է կրում կրկնվող թեմաների համար: Գրիգորյանը Խոսեց նաև գրախոսության կարգի մասին: Առանձնակի ուշադրություն հրավիրեց աշխատանքում ինքնուրույնության տարրի մասին: Խոսքի ավարտին Գրիգորյանը նշեց, որ նախկին տարիների չավարտած շրջանավարտների վրա կտարածվի նախկին գործող կարգը՝ պետական քննություն և ավարտական աշխատանք:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

4. ԼՄԵՑԻՆ. Լիանա Արմենի Մարգարյանի ներկայացրած գիտական հաղորդումը «Բնական ջրերի որակի երկրաբնապահպանական գնահատում, դասակարգում և կանխատեսում» (ԻԴ.04.01 Երկրաբնապահպանություն) թեմայի վերաբերյալ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար եզրակացություն ստանալու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ա.Ադինյանն իր խոսքում մանրամասնորեն ներկայացրեց աշխատանքն ուսումնասիրելուց հետո ծագած հարցերն ու աշխատանքում գրված մտքերի հակասությունները:

Թ.Վարդանյանը ներկայացրեց իր կողմից առաջացած հարցերը և մանրամասնորեն ներկայացրեց աշխատանքի գլուխներում և բովանդակության մեջ առկա մասնակի անհամապատասխանությունները:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.

Ժ.Աչոյանը, Ս.Սուվարյանը, ում հարցերը կրում էին նեղ մասնագիտական բնույթ՝ բազմաբաղադրիչ և համակարգային մոտեցման մասին:

Բոլոր հարցերին Լ.Մարգարյանը տվեց հանգամանակից պարզաբանումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Երաշխավորել Լիանա Արմենի Մարգարյանի ներկայացրած աշխատանքը հրապարակային պաշտպանության:

5. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

ԼՄԵՑԻՆ. Հ.Ի.Սովսիայանի հաղորդումը առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական աշխատանքների թեմաների հաստատման վերաբերյալ հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով թեմաների արդիականությունն ու պահանջներին բավարարելու հանգամանքը՝ հասատտել ներկայացրած թեմաներն ըստ ամբիոնների (5.1 Երկրաբանություն, 5.2 Քարտեզագրություն և գեոմորֆոլոգիա, 5.3 Սերվիս, 5.4 ֆիզիկական աշխարհագրություն և ջրաօդերևութաբանություն, 5.5 սոցիալ-տնտեսական աշխարհագրություն):

ԼՄԵՑԻՆ. Ռ.Ս.Սովսեայանի հաղորդումը ՈւԳԸ զեկույցների տպագրության վերաբերյալ: Նա ներկայացրեց ֆակուլտետի ուսանողների կողմից տպագրության ներկայացրած 10-15 աշխատանքների վերաբերյալ տեղի ունեցած քննարկման բովանդակությունը: Ներկայացրեց նաև ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական կոլլեգիայի վերանայման հարցը, քանի որ անդամները մահացել են, կամ չեն աշխատում ԵՊՀ-ում: Սովսեայանն առաջարկեց Գիտաժողովի ժողովածուի մեջ ընդգրկված յուրաքանչյուր զեկույցի ղեկավարին պարտավորեցնել

պատասխանատվություն ստանձնել հողվածի որակի մասով: Նշված հողվածը կներկայացվի տպագրության միայն հողվածի տպման վերաբերյալ ամբիոնի եզրակացության առկայությամբ: Խոսքի ավարտին Մովսեսյանը կոչ արեց ցուցաբերել պարտաճանաչ մոտեցում ինչը կխթանի տպագրվող հողվածների որակի բարձրացումը:

ՈւԳԸ նախագահ Անի Հակոբյանի հաղորդումը նա խոսեց նոր Խմբագրական կոլլեգիայի ձևավորման կարևորության և գրախոսություններին օբյեկտիվորեն մոտենալու մասին: Նա մանրամասնորեն ներկայացրեց հայտադիմումների ներկայացման սահմանված ժամկետները: Ա.Հակոբյանը տեղեկացրեց նաև որ զեկուցումների և հողվածների որակի բարձր մակարդակ ապահովելու համար ուսանողների համար անցկացվում են գիտական սեմինարներ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը <Ղևոնդ Ալիշան>-ի և <Տիգրան Ջրբաշյան>-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՎԵՑ. Աշխարհագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանող Սարգիս Արսյումի Սարգսյանի և Երկրաբանության մագիստրատուրայի բաժնի 2-րդ կուրսի ուսանող Արգինե Գարեգինի Բարաջանյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Սարգիս Արսյումի Սարգսյանի և Արգինե Գարեգինի Բարաջանյանի ուսման գերազանց առաջադիմությունը՝ հասարակական ակտիվ գործունեությունը և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ երաշխավորել <Ղևոնդ Ալիշան>-ի և <Տիգրան Ջրբաշյան >-ի անվան կրթաթոշակ ստանալու:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան